# Պատվաստանյութեր
## տարեցների համար



Որքան մենք մեծանում ենք, այնքան մեր մարմինը դառնում է ավելի քիչ արդյունավետ մեզ ծանր հիվանդություններից պաշտպանելու գործում: 65 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց համար ավելի մեծ է այնպիսի հիվանդություններով հիվանդանալու վտանգը, ինչպիսիք են գրիպը, COVID-19-ը, թոքաբորբը և այլն: Բայց պաշտպանված մնալու միջոց կա՝ պատվաստանյութերը:

Պատվաստումներն անվտանգ, արդյունավետ և հեշտ միջոց են տարեց մարդկանց պաշտպանելու այնպիսի կանխարգելվող հիվանդություններից, որոնք կարող են հանգեցնել հոսպիտալացման և մահվան: Առավելագույն պաշտպանության համար անպայման ժամանակին արեք Ձեր պատվաստումները: Խորհուրդ տրվող պատվաստանյութերը հիմնված են Ձեր տարիքի և առողջական վիճակի վրա և կարող են պահանջվել Ձեր աշխատանքի կամ ճամորդության համար: Եթե չգիտեք, թե որ պատվաստանյութերն եք ստացել կամ որոնք են դեռ Ձեզ անհրաժեշտ, հարցրեք Ձեր բժշկական ծառայությունների մատակարարին:

## Ո՞ր պատվաստանյութերի կարիքը ես ունեմ

65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձինք պետք է ստանան հետևյալ պատվաստանյութերը.

- **Գրիպի դեմ պատվաստանյութ:** Սա պետք է ստանաք ամեն տարի, հատկապես աշնանը, որպեսզի նվազեցնեք գրիպով հիվանդանալու հավանականությունը: Եթե 65 տարեկան կամ ավելի բարձր տարիքի եք, հարցրեք Ձեր մատակարարին ավելի մեծ չափաբաժնով գրիպի պատվաստանյութի մասին:
- **COVID-19-ի դեմ պատվաստանյութ:** Այս պատվաստանյութը ժամանակ առ ժամանակ թարմացվում է՝ պաշտպանելու վիրուսի ամենանոր ենթատեսակներից: 6 ամսական և ավելի բարձր տարիքի բոլոր անձանց խորհուրդ է տրվում ստանալ COVID-19-ի դեմ թարմացված պատվաստանյութի առնվազն 1 դեղաչափ: 65+ տարիքի մարդկանց խորհուրդ է տրվում ստանալ թարմացված պատվաստանյութի ևս մեկ դեղաչափ նախորդ դեղաչափիչ 6 ամիս (առնվազն 2 ամիս) հետ: Նախկինում պատվաստված մարդիկ պետք է  առնվազն 2 ամիս սպասեն նախքան COVID-19-ի դեմ թարմացված պատվաստանյութով պատվաստվելը:
- **Թոքաբորբի դեմ պատվաստանյութ:** Եթե Դուք 50 տարեկան կամ ավելի բարձր տարիքի եք, Դուք պետք է ստանաք այս պատվաստանյութը:  Սա կպաշտպանի Ձեզ բակտերիական  լուրջ վարակներից:
- **Գոտևորող որքինի (shingles) դեմ պատվաստանյութ:** Երկու դեղաչափից բաղկացած այս պատվաստանյութը տարեցներին պաշտպանում է գոտևորող որքինից՝  առավելագույն պաշտպանության համար ընդունվելով երկուսից վեց ամիս ընդմիջումով: Խորհուրդ է տրվում 50 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահասներին, նույնիսկ եթե նախկինում հիվանդացել եք ջրծաղիկով: Պարզեք Ձեր մատակարարից՝ արդյո՞ք Դուք արդեն ստացել եք մեկ դեղաչափից բաղկացած Zoster պատվաստանյութը:
- **Փայտացման,  դիֆթերիայի, կապույտ հազի (Tdap) դեմ պատվաստանյութ:** Այս պատվաստանյութի մեկ դեղաչափը պաշտպանում է փայտացումից, դիֆթերիայից և կապույտ հազից: Դուք կարող եք խթանիչի կարիք ունենալ յուրաքանչյուր 10 տարին մեկ:
- **Շնչառական սինցիտիալ վիրուսի (RSV)  դեմ պատվաստանյութ:** 75 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց մեկ դեղաչափը պաշտպանում է շնչառական սինցիտիալ վիրուսից (RSV): 60-74 տարեկան այն մարդկանց, ում համար RSV-ով ծանր հիվանդանալու վտանգը մեծ է, խորհուրդ է տրվում ստանալ RSV-ի դեմ պատվաստանյութի մեկ դեղաչափ: Հավելյալ տեղեկությունների համար խորհրդակցեք Ձեր բժշկական ծառայությունների մատակարարի հետ:

County of Los Angeles Public Health

(Armenian)

# Պատվաստանյութեր
## տարեցների համար

### Ինչպե՞ս ես պատվաստվեմ

- Այցելեք Ձեր բժշկական մատակարարին կամ դեղատուն:
- Հարցրեք Ձեր մատակարարին՝ արդյո՞ք Ձեզ խորհուրդ են տրվում հավելյալ դեղաչափեր:
- Եթե չունեք մատակարար, այցելեք publichealth.lacounty.gov/vaccines՝ անվճար կամ ցածր արժեքներով պատվաստման կլինիկաների ցանկի և պատվաստանյութերի մասին հավելյալ տեղեկությունների համար:
- Medicare-ը փակում է առաջարկվող պատվաստանյութերի մեծ մասի ծախսերը՝ առանց հաճախորդի գրպանից ծախսերի: Կապ հաստատեք Medicare-ի կամ Ձեր Medicare Advantage Plan-ի մատակարարի հետ՝ ավելին իմանալու համար այն մասին, թե ինչ ծախսեր են փակվում ապահովագրությամբ: Տեղեկությունները հասանելի են այստեղ՝ www.medicare.gov/health- drug- plans/health-plans:
- Լավն այն է, որ Դուք կարող եք պատվաստումների մեծ մասն անել միևնույն այցի ընթացքում:

### Հանրային Առողջության զանգերի կենտրոն

Հավելյալ տեղեկությունների համար Հանրային Առողջության զանգերի կենտրոնը հասանելի է **1-833-540-0473** հեռախոսահամարով ամեն օր՝ առավոտյան 8-ից երեկոյան 8-ը՝ շաբաթը յոթ օր: